

**ՈՈՒԲԵՆ ՍԱՔԱՊԵՏՈՅՑԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու**

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄԵԽԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Սողոնոն նախախնամութեան ընծան եղաւ՝
Սուրբ Էջմիածնին: Կոմիտաս Լարդապետ Սուրբ
Էջմիածնի ընծան հանդիսացաւ՝ հայ ժողովրդին»:
(Վազգեն Առաջինի կոնդակից)

Ճահան Ճահնուրը հայ ժողովրդի երթևէ սրեղծած մշակութային բարձրագույն արժեքներին անդրադառնալիս Ս. Մաշտոց, Կաթողիկե, Անդրանիկ շարքում նշում է նաև մեծն Կոմիտասին՝ իրեն հայ ոգու թոփքի բարձրագույն արդահայդություն: Եվ պարահական չէ, որ Կոմիտասի մասին սրեղծվել է հսկայական գրականություն թե՛ իր երկրային կյանքի ընթացքում և թե՛ դրանից հետո: Նրա մասին գրել են միերիմներու ու աշակերդները, հայերն ու օդարները, գիտնականներն ու քաղաքագիրները: Նրա մասին սրեղծվել է բազմածագված ու բազմանուն գիտական-վերլուծական, գեղարվեստական, հուշագրական գրականություն, որոնց հեղինակները փորձել են վերակերպել իրենց Կոմիտասը, քանի որ ամեն հայ ունի իր Կոմիտասը, ամեն հայ նրան գիտնում է իր հոգու արդացողանքում... Եվ այս ամենի մեջ, իհարկե, մասիսկում է սևալյան «Զանգակագունը», որպես անլոելի Կոմիտասական...

Սակայն պարզվում է, որ դեռ շատ բան կա ասելու Կոմիտասի մասին: Եվ դրա լավագույն ապացույցը Խաչիկ Բաղիկյանի «Կոմիտասը՝ ինչպիսին եղել է» գիրքն է, որ 2002 թ. լույս է ընծայել «Զանգակ-97» հրաբարակչությունը: «Եղինակն անծանոթ անձնավորություն չէ հայ մարդու շրջանակներում: Համալսարանի բազմավասկակ լեզվաբան պյոֆեսորը հեղինակ է բազմաթիվ գիտական ու մեթոդա-մանկավարժական ուսումնասիրությունների, որոնցից նշանավոր են շարահյուսական բազմաթիվ կնճռով հարցերի վերաբերյալ նրա աշխագործությունները, բառարանները: Եվ ահա անակնկալ և հաճելի մի շրջադարձ, և Բաղիկյանը գիրք է գրել Կոմիտասի մասին:

Հսկ երևույթին հոգու խորքում անթեղված և դասնամյակներ շարունակ միացող սերն առ երաժշգությունը պոռթեկացել է և սրիակել հեղինակին ի վերջո լոյս աշխարհ բերել սրբի և մոքի մի զարմանալի համարդություն ներկայացնող այս գիրքը: Իրոք, դժվար է դալ այս գրքի ժամանակին բնույթագիրը: «Ննվելով ժամանակի մամուլի հաղորդումների, ժամանակակիցների հուշերի և ամենաբազմազան աղբյուրների վրա՝ հեղինակն ամենայն մանրամասնությամբ (հաճախ օրերի և նույնիսկ ժամերի ճշգությամբ) գծում է Կոմիտասի կյանքի ուղին: Գիտականորեն վերլուծված է Կոմիտասի կերպարը հայ իրականության մեջ՝ իրեն մեծ երգահան, բանահավաք, բանասեր, խմբավար, մանկավարժ և գիտաբան:

Գիրքը միաժամանակ պարունակում է զգացական մեծ լիցք. Կոմիտասի կյանքի ու գործի դափողա-վերլուծական ընթացքը հաճախ ընդմիջվում է քնարական շեղումներով, որդեռ ամենից հաճախ գերիշխում են հանճարեղ Պարույր Սևակի սքանչելի «Զանգակապան» դողանջները: Խոկ այն բոլոր դեպքերում, երբ անզոր է փաստը, և բացակայում են կոնկրետ դպյալները, ասպարեզ է զայխ հեղինակի երևակայությունը, և իրար են միահյուսվում իրականն ու երևակայականը՝ վավերականն ու գեղարվեստականը: Նեղինակն այս հենարքին է դիմում հադրկապես Կոմիտասի ներաշխարհը, նրա ապրումներն ու մրուրումներն ընթերցողին ներկայացնելին՝ միշտ մնալով հորինվածքի հավանականության սահմաններում (հնչած, օրինակ, հեռավոր Քեռլինում, Փարիզում ու Պոլսում Կոմիտասի հայրենաբաղդույթունը կամ կուսակրոն քահանայի աշխարհիկ ոգորումները նկարագրելիս):

Գրքի ողջ կառուցվածքը հուչում է հեղինակի գիրտական մոդեցումները. գիրքն ունի ամփոփում անզերեն լեզվով, հավելված, որը բերվում է Կոմիտասի կյանքի դարձողությունը՝ ամենայն մանրամասնությամբ, նմուշներ կոմիտասյան ասույթներից, Կոմիտասի մասին եղած հայերեն և ուստերեն գրականության սպառիչ ցանկ, գեղարվեստական երկեր Կոմիտասի մասին, նշանավոր մարդկանց ասույթներ և այլն, և այն: Ասել, որ Խ. Բաղիկյանն իմ է բերել, հավաքել և մեկնաբանել այն ամենը, ինչ մինչև այժմ հայրնի էր Կոմիտասի մասին, նշանակում է թվել գրքի արժանիքների մի մասը միայն: Խաչիկ Բաղիկյանն այս ամենն անցկացրել է իր սրբի քորայով՝ սրբեղծելով Կոմիտասին արժանի և նրա հիշարժական հավերժացնող մի գործ:

Կցանկանայինք նշել նաև գրքի դասդիարակչական նշանակությունը հավելապես երիտասարդության համար: Մեր օրերում, երբ «օրբանամուր ախլան» իր վայրի իրախճանքն է գոնում, և եթերը ողողված է ամեն ինչով, բացի Կոմիտասից, այս գրքի անհրաժեշտությունն ավելի է կարևորվում մեկ անգամ ևս Կոմիտասին հաղորդակցվելու և ազգային երաժշգույթյան ապագայի մասին խորիելու առումով:

Մեռում է միայն ցավել մերօրյա մի «պակասության» համար. գիրքը լույս է բեսել ընդամենը 500 օրինակ, որ նման գրքի համար մի կարիք է մեծ ծովում: Մեռում է հուսալ և սպասել լավ ժամանակների, երբ հայ ընթերցողը վերսփին կգտնի իր նախկին ընթերցասիրությունը, և այս խիստ արժեքավոր և մնայուն գիրքը, ազարվելով մանր-մունը թերություններից ու վրիպումներից, կվերահրարարակվի պատշաճ բապարանակով ու կգրնի իր ընթերցողը: